

## **Նպատակ 2: Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը**

Ժամանակն է վերանայել՝ ինչպես ենք աճեցնում, բաշխում և սպառում մեր սնունդը:

Ճիշտ գործելու դեպքում գյուղատնտեսությունը, անտառաբուծությունը և ձկնաբուծությունը կարող են մենդարար սնունդ ապահովել բոլորի համար և ստեղծել պատշաճ եկամտի հնարավորություն՝ միաժամանակ աջակցելով գյուղական բնակավայրերի մարդակենտրոն զարգացմանն ու պաշտպանելով շրջակա միջավայրը:

Ներկայում մեր հողերը, քաղցրահամ ջուրը, օվկիանոսները, անտառները և կենսաբազմազանությունը արագորեն դեգրադացվում են: Կլիմայի փոփոխությունը էլ ավելի մեծ ճնշում է այն ռեսուրսների վրա, որոնցից մենք կախված ենք, ինչը մեծացնում է այնպիսի աղետների հետ կապված վտանգը, ինչպիսիք են ջրհեղեղը և երաշտը: Գյուղաբնակ շատ կանայք և տղամարդիկ այլևս չեն կարողանում ծայրը ծայրին հասցնել իրենց հողում, ինչը նրանց հարկադրում է տեղափոխվել քաղաքներ՝ հնարավորությունների հետևից:

Այսօրվա 795 մլն սովի մատնված և մինչ 2050 թ. սպասվող ևս 2 միլիարդ մարդկանց սնելու համար անհրաժեշտ է հիմնավոր փոփոխություն կատարել համաշխարհային պարենի և գյուղատնտեսության համակարգում:

Պարենի և գյուղատնտեսության ոլորտը պարունակում է զարգացման առանցքային լուծումներ և կարևորագույն դեր ունի սովի և աղքատության վերացման հարցում:

### **ԻՆՉՈ՞ՒՄ Է ԿԱՐԵՎՈՐ**

*Այսօրվա 795 մլն սովի մատնված և մինչ 2050 թ. սպասվող ևս 2 միլիարդ մարդկանց սնելու համար անհրաժեշտ է հիմնավոր փոփոխություն կատարել համաշխարհային պարենի և գյուղատնտեսության համակարգում:*

### **Ո՞րն է նպատակը**

Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը:

### **Ինչո՞ւ**

Ճայրահեղ սովը և թերսնումը խոչընդոտում են կայուն զարգացմանը և ստեղծում թակարդներ, որոնցից հեշտ չէ խուսափելը: Սով և թերսնում նշանակում է պակաս արդյունավետ անհատներ, որոնք ավելի շատ են հակված հիվանդանալու և հետևաբար հաճախ անկարող են վաստակել ավելին և բարելավել իրենց կենսամիջոցները: Ամբողջ աշխարհում շուրջ 800 մլն մարդ տառապում է սովից, նրանց ճնշող մեծամասնությունը՝ զարգացող երկրներում:

2015 թ. դրությամբ սոված մարդկանց քանակն ըստ տարածաշրջանների՝

ԱՄՆ և Եվրոպա – 14,7 մլն

Աֆրիկա – 232,5 մլն

Ասիա – 511,7 մլն

Լատինական Ամերիկա և Կարիբներ – 34,3 մլն

Օվկիանիա – 1,4 մլն

**Ինչո՞ւ այդքան շատ են սոված մարդիկ, այն դեպքում, երբ մոլորակում կա բավարար սնունդ բոլորին կերակրելու համար:**

Բերքահավաքի անհաջող եղանակները, ինչպես նաև սննդի վատնումը նպաստել են սննդի անբավարարությանը: Պատերազմները նույնպես բացասաբար են ազդել սննդամթերքի առկայության վրա և հանգեցրել են շրջակա միջավայրի ավերմանը, իսկ այն վճռորոշ նշանակություն ունի սննդային բուսատեսակների աճեցման առումով:

**Ինչո՞ւ պետք է մտահոգվեմ**

Մենք բոլորս ցանկանում ենք, որ մեր ընտանիքներն ունենան ուտելու համար բավարար սնունդ, որը անվտանգ է և սննդարար: Աշխարհում սովի բացակայությունը կարող է դրական ազդեցություն ունենալ մեր տնտեսությունների, առողջության, կրթության, հավասարության և սոցիալական զարգացման վրա: Այն առանցքային նշանակություն ունի բոլորի համար ավելի լավ ապագայի կառուցման առումով: Բացի այդ, երբ սովը սահմանափակում է մարդկայն զարգացումը, մենք չենք կարողանա հասնել կայուն զարգացման այլ նպատակներին, ինչպիսիք են՝ կրթությունը, առողջությունը և գենդերային հավասարությունը:

**Ի՞նչ կարծենա սովի գրոյական մակարդակի հասնելը**

Մինչ 2030 թ. ամբողջ աշխարհում սովը վերացնելու համար, ըստ հաշվարկների, տարեկան անհրաժեշտ կլինի միջինը 267 մլրդ դոլար: Հարկ կլինի ներդրումներ կատարել գյուղական և քաղաքային բնակավայրերում և սոցիալական

պաշտպանության ոլորտում, որ աղքատ մարդկանց համար հասանելի լինի սնունդը, և նրանք կարողանան բարելավել իրենց կենսամիջոցները:

### **Ի՞նչ կարող ենք անել օգնելու համար**

Դուք կարող եք փոփոխություններ մտցնել ձեր կյանքում՝ տանը, աշխատավայրում և համայնքում՝ աջակցելով տեղական ֆերմերներին կամ շուկաներին, կայուն կերպով ընտրելով սնունդը, աջակցելով բոլորի լավ սնուցմանը և պայքարելով սննդամթերքի վատնման դեմ:

Կարող եք նաև օգտագործել ձեր իշխանությունը որպես սպառող և ընտրող՝ պահանջելով, որ բիզնեսներն ու կառավարություններն այնպիսի ընտրություններ և փոփոխություններ կատարեն, որոնք իրականություն կդարձնեն Չրոյական սովը: Միացե՛ք խոսակցությանը՝ լինի դա սոցիալական մեդիայի հարթակներում, թե ձեր տեղական համայնքներում:

Դուք կարող եք միանալ Չրոյական սովի համաշխարհային շարժմանը՝ միանալով Չրոյական սովի մարտահրավերին ([www.zerohungerchallenge.org](http://www.zerohungerchallenge.org)): Այդպիսով կիմանաք ավելին, այդ թվում՝ գործողություններ ձեռնարկելու նոր ուղիների մասին:

Կայուն զարգացման նպատակների և Նպատակ 2-ի մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել <http://www.un.org/sustainabledevelopment>